

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ
դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Թարգմանության դժվարությունները օտար լեզվի ուսուցման
գործընթացում»

Կատարող՝ Լ. Միրիջանյանի անվան հ.155 հիմնական դպրոցի ուսուցիչ Անահիտ
Կարապետյան

Ղեկավար՝ Քնարիկ Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ 2023

Ներածություն

Կրթական բարեփոխումների հիմքում ընկած է նոր ժամանակի հրամայականներին համապատասխանող որակի կրթություն ունենալու անհրաժեշտությունը: Այս գործընթացն իրենից ենթադրում է ուսումնական գործընթացի բոլոր ասպեկտներում իրականացնել շարունակական բարեփոխումներ ու արդիականացում՝ այդ թվում ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացում, զինում ժամանակակից մանկավարժամեթոդական հնարներով, անդադար ինքնակրթման ու ինքնազարգացման գործընթաց: Հետազոտական աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե ինչպես ուսուցիչը կարող է օգնել աշակերտներին հաղթահարել թարգմանության դժվարությունները օտար լեզվի ուսուցման գործընթացում: Թարգմանությունը միշտ էլ բարդ աշխատանք է, իսկ այդ աշխատանքը հաղթահարվում է բազմահմուտ ուսուցչի օգնությամբ, ով կիրառում է իր մասնագիտական գիտելիքները և հարուստ փորձը: Այս դեպքում ավելի հեշտությամբ է կատարվում թարգմանությունը, որովհետև ուսուցչի բացատրությունը օգնում և ուղղորդում է սաներին: Թարգմանությունները խթանում են աշակերտների ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու, գիտական աշխարհայացքը ձևավորելու համար: Հետազոտական աշխատանքի խնդիրն է պարզաբանելու, թե ինչպես կարելի է հաղթահարել թարգմանության դժվարությունները օտար լեզվում, հատկապես մենիմաստ և բազմիմաստ բառերի օգտագործման դեպքում:

« Թարգմանության դժվարությունները օտար լեզվի ուսուցման գործընթացում»

Ուսուցումը մարդուն տրվող գիտելիքները, կարողություններն ու հմտություններն են:

Ուսուցումը բարդ պրոցես է: Իսկ այդ պրոցեսը հաղթահարելու համար

աշակերտներից պահանջվում են մեծ ջանքեր: Այն ճանաչողական գործընթաց է: Այս

գործընթացը նպատակաուղղված մանկավարժական գործընթաց է: Օտար լեզվի

ուսուցման գործընթացում աշակերտները հանդիպում են բազմաթիվ

դժվարությունների, խոչընդոտների: Հիմնական խոչընդոտների աղբյուրը մայրենի

լեզվի ազդեցությունն է: Աշակերտը պետք է կարողանա հասկանալ

արտահայտությունների իմաստները ոչ թե բառացի, այլ փոխաբերական իմաստով՝

հատկապես ավագ դպրոցում: Օրինակ՝

Voil un poil dans la main—être paresseux

Avoir un verre dans le nez—être un peu ivre

Avoir l'estomac dans les talons—avoir grand faim

Prendre ses jambes a` son cou—partir très vite

Les doigts dans le nez—sans effort

Թարգմանել նշանակում է ունենալ ստեղծագործական միտք, լեզվի ճկունություն:

Աշակերտների համար դժվարություն է ներկայացնում մայրենի լեզվի

թարգմանությունը

այլ օտար լեզվով՝ հատկապես մենիմաստ և բազմիմաստ բառերի ներկայության

դեպքում: Նույնիսկ մեկ բառի սխալ թարգմանությունը կարող է կորցնել տեքստի

որակը, իմաստը, նպատակը, խոսքի գեղեցկությունը: Կան բառեր,

արտահայտություններ, որոնք հատուկ են տվյալ լեզվին:

Հատկապես սաների համար դժվարություն է ներկայացնում արտահայտությունների

թարգմանությունը, բայց եթե դրանց համարժեքը կա հայոց լեզվում, գործը մի փոքր

հեշտանում է: Օրինակ՝

Compter qch. sur les doigts---մատների վրա հաշվել

S' en laver les mains--- գործից դուրս գալ, ձեռքերը լվանալ, հեռանալ

Se lever du pied gauche--- ձախ ոտքից արթնանալ, ունենալ վատ տրամադրություն

Avoir une dent contre qn.--- մեկի դեմ ատամ ունենալ

Avoir le coeur sur la main--- այս արտահայտության թարգմանությունը մի փոքր բարդ է իր բնույթով: Բառացի նշանակում է ունենալ սիրտը ձեռքի վրա ,բայց պետք է թարգմանվի առատաձեռն լինել:

Հատկապես դժվար է բազմիմաստ բառերի թարգմանությունը: Օրինակ՝ prendre բայը, որը նշանակում է վերցնել, բայց որով կազմված տարբեր արտահայտություններն ունեն բազմաթիվ իմաստներ: Օրինակ՝

Prendre des photos—լուսանկարել

Prendre le bus—ավտոբուս նստել

Prendre le taxi—տաքսի նստել

Prendre des mesures—միջոցներ ձեռնարկել

Prendre le pain---հաց ուտել

Prendre le café---սուրճ խմել

Prendre un bain de soleil---արևի լոգանք ընդունել

Prendre une décision---որոշում կայացնել

Prendre des notes ---նշումներ անել

Prendre part---մասնակցել

Prendre place ---տեղ զբաղեցնել

Prendre froid---մրսել, հիվանդանալ

Prendre sa source---սկիզբ առնել

Prendre la tension---ճնշումը չափել

Prendre l' habitude---սովորություն ձեռք բերել

Prendre la main dans le sac—հանցանքի վայրում բռնել

Prendre garde--- զգույշանալ

Prendre la parole--- ելույթ ունենալ

Prendre le pouls---երակազարկը չափել

Prendre la température—ջերմությունը չափել

Prendre l' ascenseur---վերելակ նստել

Prendre comme un fou—գժի տեղ դնել

La direction a` prendre—որ ուղղությամբ գնալ

Prendre son apéritif---խմիչք խմել

Prendre la conscience—գիտակցել

Հատկապես բազմիմաստ բայերից -faire- և -avoir- բայերով կազմված արտահայտություններն են շատ հանդիպում տեքստերում և այստեղ աշակերտների գործը, բնականաբար, դժվարանում է թարգմանության ժամանակ: Օրինակ՝

Faire un songe—երագել

Faire un dessin—նկարել

Faire rire-ծիծաղեցնել

Faire du ski—դահուկ քշել

Faire une remarque-նկատողություն անել

Faire son nid-բույն հյուսել

Faire grincer des dents—բարկացնել

Faire de l' alpinisme-լեռնագնացությամբ զբաղվել

Faire match nul-ոչ ոքի խաղալ

Faire de la natation—լողով զբաղվել

Faire partie—մաս կազմել

Faire des efforts---ջանք գործադրել

Faire marcher—միացնել

Faire la vaisselle—ափսեները լվանալ

Faire plaisir--հաճույք պատճառել

Faire de la luge—սահնակով սահել

Faire la chambre—սենյակը մաքրել

Faire du jardinage---այգեգործությամբ զբաղվել

Faire la grasse matinée—երկար քնել

Faire la commande---պատվիրել

Faire du camping---բացօթյա զբոսանք անել

Faire une station—կայանել

Faire un rabais—զեղչել

Faire bon ménage-հաշտ ապրել

Faire des manières---կոտրատվել

Faire un effort—ջանք գործադրել

Faire un travail—աշխատանք անել

Faire une ronde—շրջան կազմել

Faire un pont—կամուրջ կառուցել

Faire la toilette—մաքրությամբ զբաղվել

Faire entrer—ներս թողնել

Faire la tête—խռովել

Faire la lessive—լվացք անել

Faire des achats d'urgence-առաջին անհրաժեշտության գնումներ կատարել

Faire le délicat—բժախնդրություն ցուցաբերել

Այս բոլոր թարգմանությունները խթանում են աշակերտների ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու, գիտական աշխարհայացք ձևավորելու համար:

Մրանք իրականացվում են ուսուցչի և աշակերտի փոխազդեցության ընթացքում:

Երկուսի կատարած աշխատանքը դառնում է ճանաչողական գործունեություն:

Մրանք օգնում են գիտելիքների յուրացմանը, բառապաշարի ընդլայնմանը, անձանոթ բառերի և արտահայտությունների կիրառմանը, լեզվական հմտությունների զարգացմանը, նոր կամ անձանոթ բառերի օգտագործմանը

երկխոսություններում: Կան արտահայտություններ, նախադասություններ, որոնք իրոք բարդություն են ներկա-յացնում տվյալ իմաստը ճիշտ արտահայտելու, ճիշտ թարգմանելու, գեղեցիկ, ոսկեղենիկ հայոց լեզվով արտահայտելու համար: Օրինակ՝

1-Les amis sont les anges qui nous soulèvent quand nos ailes n' arrivent plus a` se rappeler comment voler.

2-Loin des yeux , loin du coeur .

Կան ասացվածքներ, որ յուրաքանչյուր աշակերտ յուրովի է մեկնաբանում, թարգմանում, վերլուծում: Օրինակ՝

1-Santé passe richesse

2-Loin des yeux , loin du coeur

3-Il ne faut jamais remettre au lendemain ce qu' on peut faire le jour même.

4-C' est au fruit qu'on connaît l' arbre.

5-Tel père , tel fils.

6-Si la jeunesse savait, si la vieillesse pouvait

7-Qui vivra verra

8-Les petits cadeaux entretiennent l' amitié.

9-Les goûts et les couleurs ne sont pas a` disputer.

10-Qui ne risque rien n' a rien

11-L'esprit sain dans un corps sain.

12-L'appétit vient en mangeant.

13-Ventre affamé n' pas d' oreille.

Մաների համար քավականին բարդություն է ներկայացնում և երբեմն էլ չեն համա-
ձայնվում Պիեռ Գամառայի թարգմանած Հովհանես Թումանյանի «Հայոց
լեռներում» քանաստեղծության թարգմանության հետ: Նշում են, որ թարգմանությունը
այնքան էլ հաջողված չէ, որ կան շատ անհամապատասխանություններ բնագրի հետ:
Օրինակ`

La route est sombre, la route est noire,

Noire la nuit,

Immense, infinie,

Et nous grimpons vers les sommets,

Dans les rudes montagnes,

Montagnes d' Arménie.

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,

Ու մենք անհատնում

Էն անլույս մըթնում

Երկար դարերով զրնում ենք դեպ վեր

Հայոց լեռներում,

Դրժար լեռներում:

Աշակերտների մոտ բարդություն է ներկայացնում նաև նույնանուն բառերի

Թարգմանությունը: Օրինակ՝

Près—près—le pré

Le temps—tant

Le mur-mûr- la mûre

La Conte-le compte-le comte

Թարգմանությունների ժամանակ աշակերտները չունեն լեզվաբանական հմտություններ, լեզվական հոտառություն, շարահյուսական և ձևաբանական գիտելիքների ճիշտ կիրառում: Աշակերտի համար մեծ դժվարություն են ներկայացնում թարգմանվող լեզվի կառույցները, մշակույթը, բառն ու բանը: Ուսուցչի օգնությամբ սանը փորձում է կատարել բարդ թարգմանություններ: Ուսուցչի օգնությամբ համատեղ ջանքերով թարգմանելուց հետո, երբ կատարում են համեմատություն, պարզվում է, որ լավագույնը բնագիրն է, որովհետև կան բառեր, արտահայտություններ, որոնք հատուկ են տվյալ լեզվին: Աշակերտների համար շատ դժվար է, երբեմն անհնար տվյալ լեզվի կոլորիտի պահպանումը:

Տիրապետելով թարգմանության հիմունքներին, աշակերտների մոտ ձևավորվում են իրենց հայացքները, համոզմունքները, աշխարհայացքը, ստեղծագործական ընդունակությունները, բարոյական որակները, կարողանում է կատարել համեմատություն թարգմանվող լեզվի և իր մայրենի լեզվի միջև: Թարգմանելու ժամանակ աշակերտը գիտի, որ ունի նպատակաուղղված գործողություն՝ թարգմանել տեքստը: Այս դեպքում թարգմանությունը իր դրական ազդեցությունն է թողնում աշակերտի և կրթության և դաստիարակության վրա: Ուրեմն եթե թարգմանությունը կրթադաստիարակչական աշխատանք է, ապա այդ աշխատանքն էլ իր էությամբ ստեղծագործական է: Ուսուցման ժամանակ օտար լեզվում ծագած թարգմանության դժվարությունները հաղթահարվում են ուսուցչի օգնությամբ, տրված խորհուրդներով, մենիմաստ և բամիմաստ բառերի բացատրությամբ: Երբեմն ոչ բոլոր բառերը կարելի է և պետք է թարգմանել ,որովհետև ինչպես Վահան Տերյանն է գրել.« Օտար բառը թարգմանում են կամ տեղը մի նոր, ինչպես իրենք են ասում ավելի « հայաշունչ» բառ են թխում...Ստեղծվում են մի շարք անկենդան , շինծու , անհասկանալի բառերի և դարձվածքների մի շարք, որոնք մեր լեզուն դժվարացնում են, դարձնում են ավելի դժվար յուրացվող մի լեզու: Իսկ լեզուների պատմությունը և

համեմատությունը մեզ ցույց է տալիս, որ մրցության մեջ հաղթում է այն լեզուն, որն ավելի հեշտ է յուրացվում, որի կազմվածքը ավելի պարզ է: Լեզուն զարգացնել չի նշանակում խուսափել եվրոպական բառերից, նրանց տեղը հայերեն հնացած կամ բոլորովին անտեղի մեռած բառեր դնել: Լեզուն զարգանում է ազատ և չի կամենում հպատակվել լեզվաբանների պեղած հին օրենքներին և օրինակներին» :

Դժվարություններն անխուսափելի են թարգմանության ընթացքում, բայց հմուտ ուսուցիչը կիրառում է իր մանկավարժական գործունեության մեթոդները, ձևերը, հնարքները, կարողանում է բացատրել ,օգնել, ճիշտ ուղու վրա դնել աշակերտին: Երկուստեք աշխատանքի շնորհիվ թարգմանությունը կդառնա ավելի հաջողված: Աշակերտն էլ պետք է լինի որոնող ու պրպտող, որպեսզի երկուսի աշխատանքն էլ իր ցանկալի արդյունքը տա: Քարացած դարձվածքները յուրաքանչյուր լեզվի մասն են կազմում; : Աշակերտի համար, իհարկե, դրանք բավականին բարդ են թարգմանելու համար: Օրինակ`

A plat ventre- բերանքսիվայր

Tenir compte- հաշվի առնել

Avoir le mal de—կարոտել

Etre un aigle—խելացի լինել

Lire entre les lignes—գուշակել, ենթադրել

Garder la ligne—մնալ նիհար

Dans les grandes lignes-մի քանի բառով առանց մանրամասներն հաշվի առնելու

Etre en ligne—կապի մեջ լինել

Mettre la dernière ligne a` qch-ավարտել ինչ-որ բան

A la ligne—նոր տողից

Chargé de cours –դասախոս

Chargé de pouvoir-իշխանության ներկայացուցիչ

Lettre chargée –արժեք ունեցող

Estomac chargé—ծանրացած ստամոքս

Récit chargé—չափազանցրած պատմվածք

Ուսուցչի մասնագիտական գիտելիքները, հարուստ փորձը նպաստում են այն բանին, որ աշակերտը իր« ինչունների» պատասխանը ստանում է ուսուցչից

,թարգմանության ընթացքում հերթական դժվարության ժամանակ: Ուսուցիչը միշտ էլ հաշվի է առնում սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, ուսումնական ռեալ հնարավորությունները:

Բազմահմուտ ուսուցիչը միշտ էլ օգնում է աշակերտին թարգմանության ժամանակ և դնում ճիշտ ուղուվրա, իհարկե՝, օգտագործելով իր առաջավոր փորձը, մանկավարժական տեխնիկան, մանկավարժական երևակայությունը: Այս դեպքում աշակերտը ավելի լավ է ճանաչում երևույթը, փաստը, իրադարձությունը, դրանց փոխկապակցությունները և ավելի հեշտությամբ է կատարվում թարգմանությունը, որովհետև և՛ ուսուցիչը, և՛ աշակերտն ունեն նպաստակաուղղված գործունեություն՝ այն է թարգմանություն: Այստեղ ուսուցչի ներգործությունը խթանում է աշակերտի ակտիվությունը: Աշակերտի համար նյութը ավելի ավելի պարզ է դառնում, իսկ թարգմանությունը՝ դյուրին: Այս գործընթացի ժամանակ ուսուցիչը հասկանում է աշակերտի թույլ և ուժեղ կողմերը և նշվում է հետագա աշխատանքների ուղիներ: Ուսուցչի և աշակերտի գործունեությունը փոխազդեցություններ են: Ուսուցիչը կիրառում է մեթոդներ, տալիս հարուստ գիտելիք, որոնք օգնում են այս պարագայում սաներին: Այս գործընթացը միայն դասավանդման և ուսման մեխանիկական գումար չէ. դա կարող է միայն ձանձրույթ պատճառել: Ուսուցիչը ստեղծում է ուսման մոտիվացիա, որն էլ նպաստում է այդ աշխատանքին: Թարգմանության ընթացքում ծագում են դժվարություններ սաների մոտ, որոնք որքան էլ որ փորձում են դրանք միայնակ հաղթահարել, դարձյալ անհնար է կամ շատ աշխատատար է: Այս դեպքում էլի օգնության է հասնում բարի և օգնող ուսուցիչը: Կան արտահայտություններ և դարձվածքներ, որոնք առանց ուսուցչի բացատրության շատ դժվար են աշակերտների համար և՛ թարգմանելիս, և՛ իմաստը հասկանալիս: Օրինակ՝

Avoir mal au coeur—սրտխառնոց ունենալ

De bon coeur—սրտանոց

Avoir le coeur gros —վշտացած լինել

Revenir sur ses pas---վերադառնալ

Donner du coeur--- քաջալերել

Au chant du coq—վաղ առավոտյան

Gagner sa vie –ապրուստը վաստակել

Gagner la côte—ափ հասնել

Un coup de main—օգնություն

Manger a' belles dents—ախորժակով ուտել

Avoir la tête sur les épaules—առողջ բանականություն ունենալ

Voir le jour—լույս տեսնել

Avoir le coeur sur la main—առատաձեռն՝ մեծահոգի լինել

Au petit jour—լուսաբացին

Sécher les cours---դասերից բացակայել

Pendre la crémaillère—նորամուտը տոնել

Etre mauvaise langue—չարախոս լինել

Courir un danger-վտանգի ենթարկվել

Un serrement de Coeur—թախիծ

Des yeux de braises—կրակոտ աչքեր

Mener par le bout du nez—քթից բռնած ման ածել

En vouloir a` զո---մեկի վրա բարկացած լինել

Թարգմանության ժամանակ հարկավոր է ընկալել թարգմանվող նյութի իմաստը, այնուհետև՝ խոսքը: Խոսքի ընկալումը մեծ դեր ունի թարգմանության ժամանակ: « Եթե լեզուն, - ասում է Մաքս Միուլլերը, բնության ստեղծագործությունն է, ապա խոսքը բնության ամբողջ ստեղծագործությունը պսակող մի հրաշալիք է, որը պահպանված է եղել մարդու համար, եթե դա մարդկային ստեղծագործության արդյունք է, ապա նա բարձրացնում է ու հասցնում մարդուն աստվածայինի աստիճանի, եթե Աստծո պարզն է, ապա դա նրա ամենամեծ ու ամենաթանկագին պարզն է... Ամենահին դարերից սկսած խոսքը եղել է հիացումի առարկա մարդկանց համար: Ոչ արտաքին աշխարհը կամ բնությունը, ոչ մարդու ներքին աշխարհը չեն հարուցել այնքան խորը գմայլմունք ու զարմանք, որքան լեզուն: Եվ դրա համար էլ դարերից ի վեր ժողովուրդը առանձին մի հավատ ունի դեպի խոսքը: Խոսքը դարձել է հավատալիք, պաշտամունքի առարկա: Խոսքի զորությունը ասեղ է, անքննելի և ամենակարող: Խոսքը կենդանի շունչ է համարվում—ոգի, զորություն կախարդական...» Թարգմանություն կատարելիս երեխային օգնում են

հույզերը, պատկերացումները, ընկալունակությունը: Յուրաքանչյուր աշակերտ թարգմանությունը կատարում է յուրովի՝ անցկացնելով իր պրիզմայի միջով: Երբեմն այնպիսի գեղեցիկ մտքեր են ձևակերպում, որ հասկանում ես երեխային դուր է եկել թարգմանվող նյութը, ինչպես նաև իր խորը հետքն է թողել սանի վրա:

Թարգմանությունը օգնում զարգացնել աշակերտի տրամաբանությունը, գիտելիքների պաշարը: Եթե աշակերտը կատարում է թարգմանություն, ապա օգտվում է բառարաններից, գտնում բառերի բացատրությունները, կիրառ ման ձևերը և փորձում է դրանք ճիշտ ու տեղին կիրառել նախադասություններում: Իսկ այս գործընթացը հարստացնում է անձանթ բառերի իմացությունը և դրանց կիրառումը: Միշտ էլ ուսուցիչը կանգնած է աշակերտի կողքին, օգնում, սատարում ներկուսի աշխատանքից էլ ծնվում է ճիշտ, գրագետ, գեղեցիկ և որակյալ թարգմանություն:

Աշակերտները միշտ այն կարծիքին են, որ որքան էլ որակյալ լինի թարգմանությունը, միևնույնն է, բնագիրը ամենահաջողվածն է, ամենաորակյալը ու որքան էլ փորձեն, չեն կարող հասնել կատարյալին: Օրինակ՝

Pour mon Coeur enivré d' amour, il n' est pas de rêve aussi clair

Il n' est pas de front aussi pur ainsi que nos chanteurs anciens

Va par le monde, ô mon ami ; tu ne verras nulle montagne

Aussi blanche que la neige blanche au fier sommet de l' Ararat.

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.

Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.

Աշխարհի անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.

Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

Եզրակացություն

Օտար լեզվի ուսուցման գործընթացում, իրոք աշակերտները հանդիպում են բազմաթիվ դժվարությունների, խոչընդոտների: Հատկապես, երբ մայրենի լեզվից թարգմանություն են կատարում օտար լեզվով: Այստեղ առնչվում են թարգմանելու բարդ խնդրի հետ: Իհարկե, եթե արտահայտությունների համարժեքը կա իրենց մայրենի լեզվում, ապա գործը մի փոքր հեշտանում է: Դժվար է ն՝ բազմիմաստ, ն՝ մենիմաստ բառերի թարգմանությունը: Նշեմ, որ յուրաքանչյուր թարգմանություն զարգացնում է աշակերտի միտքը, աշխարհայացքը, ընդլայնում է բառապաշարը, յուրացնում է անձանոթ բառերն ու արտահայտությունները, կարողանում է օգտագործել նոր բառերը նախադասություններում և երկխոսություններում: Այս բոլորը խթանում են լեզվական հմտությունների զարգացմանը: Յուրաքանչյուր աշակերտ յուրովի է մոտենում թարգմանությանը: Ուսուցիչը միշտ պետք է հաշվի առնի աշակերտի ունակությունները: Աշակերտը միշտ էլ փորձում է, չարչարվում, ուզում է գտնել տեքստի իմաստը: Երբեմն ստացվում է, երբեմն կան հատվածներ, որոնց թարգմանելն իրոք դժվար է: Երբեմն էլ իմաստը հասկանում են, բայց դժվարությամբ են կարողանում շարադրել մտքերը: Այս դեպքում օգնության է հասնում բազմահմուտ ուսուցչուհին և երկուսի աշխատանքի արդյունքում ծնվում է գեղեցիկ, հասկանալի թարգմանություն:

Օգտագործված գրականության ցանկ

1—Յ.Ա. Ամիրջանյան, Ա.Ս.Սահակյան Մանկավարժություն
(Ուսումնական ձեռնարկ) « Մանկավարժ» 2005

2---Վ. Ստեփանյան, Դ. Ղազարյան, Ա. Եղիազարյան, 2010 թ.

Հանրակրթական դպրոցի 10-րդ ֆրանսերենի դասարանի դասագիրք
ՄԱՆՄԱՐ, 2010թ.

3---Վ. Ստեփանյան, Դ. Ղազարյան, Ա. Եղիազարյան, 2010թ.

ՄԱՆՄԱՐ, 2010թ.

Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի ֆրանսերենի դասագիրք

4---Վ. Ստեփանյան, Դ. Ղազարյան, Ա. Եղիազարյան, 2011թ.

Հանրակրթական դպրոցի 12-րդ դասարանի դասագիրք

ՄԱՆՄԱՐ, 2011թ.